ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/298

« 6» Դեկտեմբերի 2019թ

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 33-Ա.,34-Ն, 35-Ա, 36-Ա և 37-Ա որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» Դեկտեմբերի 2019 թվականի N 33-Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏՄԲԵՐԻ 4-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 4-ի նիստի օրակարգը:

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին: .
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2019թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ.դեկտեմբերի 4
հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«4» Դեկտեմբերի 2019 թվականի N 34-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ, 12-րդ 13-րդ և 14-րդ հոդվածներով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն 1.2 հավելվածի:

2..Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 4
հ. Ձորագետ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 4-ի թիվ 34-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ.սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասհինգ հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսան հինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսան հինգ հազար դրամ,

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով,

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի

գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
4)համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.
6) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.
7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլայինխմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասերկու հազար դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհինգ հազար դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան մեկ հազար դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար դրամ,
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տաս հազար հինգ հարյուր դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասհինգ հազար դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական

շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան մեկ հազար դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար ՝ յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9)համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսան հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ մեկ հարյուր հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երեք հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ յոթ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երեք հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝մեկ հարյուր քսան հազար դրամ,

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս երկու հազար դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասվեց հազար դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան մեկ հազար դրամ,
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հինգ հազար դրամ,

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
-մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
-50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տաս հազար դրամ,

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասվեց հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ

դ. այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14)համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

16) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար մեկ հարյուր հազար դրամ.

17) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար դրամ:

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում հարյուր հազար դրամ:

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

04 դեկտեմբերի2019թ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 4-ի թիվ 34-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1)Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար տաս հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հինգ հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա. բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ մեկ հարյուր դրամ.

բ. ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

- առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն դրամ.
- հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան դրամ.
- վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ դրամ.

- գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք դրամ,
- արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ դրամ.

գ. շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն հավելվածի 7-րդ կետի բ/ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն հավելվածի 7-րդ կետի բ/ ենթակետերով սահմանված դրույքաչափով.

դ. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսունից մինչև հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

ե. Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7-րդ կետի բ/ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երրեք հազար դրամ,

8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց սեփականության իրավունքով պատկանող բնակարանի յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար ամսեկան վեց դրամ՝:

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար ինը հարյուր դրամ:

10) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ մեկ պայմանական միավոր անասունի համար ամսեկան կազմում է մեկ հարյուր դրամ՝փոխհատուցման գումարի չափով:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա ԳՐԻԳՈՐՅԱՆ

04 դեկտեմբերի 2019թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«4» Դեկտեմբերի 2019 թվականի N 35-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ, հոդվածի 1-ին մասով Ձորագետ համայնքի ավագանին

Ո ր ո շ ու մ է.

1.Հաստատել Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Ձորաագետ համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 27-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020թվականի հունվարի 1-ից:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2019 թ. դեկտեմբերի 4
հ. Ձորագետ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ձորագետ համայնքի ավագանու
2019թվականի դեկտեմբերի 4-ի N 35-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակիցների թվաքանակը՝ 3:

ՀՀ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար)
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
1.	Համայնքի ղեկավար	1	170000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ			
2	Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար	1	136000
3	Համայնքապետարանի առաջատար մասնագետ	1	134000
ԸՆԴԱՄԵՆԸ		3	440000

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«04» Դեկտեմբերի 2019 թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատե Ձորագետ համայնք սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2019 թ դեկտեմբերի 4
հ. Ձորագետ

Հավելված

Ձորագետ համայնքի ավագանու
«4» դեկտեմբերի 2019թ. N 36-Ա որոշման

2019թվականի հոկտեմբերի 20 -ից մինչև նոյեմբերի 30-ը ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Նշումներ
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)	
1	Լուսադիոդային լուսարձակ	2019	20	20	900.0
2	Ժամանակի ռելե	2019	2	2	30.0
3	ՎԱԶ 21213 մակնիշի մարդատար ավտոմեքենա	2019	1	1	2300.0
Ընդամենը			23	23	3230.0

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«4» Դեկտեմբերի 2019 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Ձորագետ համայնքի սեփականության 2019թվականի գույքագրման փաստաթղթերը.
Շենքեր և շինություններ /կառուցվածքներ/ - 833753.5 հազար դրամ
Փոխանցվող հարմարանքներ - 900.0 հազար դրամ
Տրանսպորտային միջոցներ - 2300,0 հազար դրամ
Համակարգչային սարքավորումներ /տեխնիկա/ - 780.0 հազար դրամ
Գրասենյակային և տնտեսական գույք և պարագաներ, գործիքներ -585.0 հազար դրամ
Այլ հիմնական միջոցներ / գրքային ֆոնդ/ - 546.9 հազար դրամ
Փոքրարժեք կամ արագամաշ առարկաներ - 30.0 հազար դրամ
2.Գույքագրման ընթացքում պակասորդ և ավելցուկ չի հայտնաբերվել:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ԻՍՐԱՅԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ
ՍԱԹԻԿ ՋԱՆԻՆՅԱՆ
ՀՈՎԻԿ ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2019 թ. դեկտեմբերի 4
հ. Ձորագետ